

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՐԱԿՈՒԱՅ ԿԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

(Շ-ր-ւ-ի-թ-ի-ւ Լ ԺԵԸ)

V.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ

ԿՇՌԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախորդ հատուածները նուիրուած էին գլխաւորապէս իւրաքանչիւր առանձին աշխատաւորի ուշադրութեանը. ջանացինք շարժել սորա ազատ կամքը ու խելքը նորա համար, որ նա սովորի կիրակի օրուայ հանգստութեան վերայ նայել ոչ ինչպէս հասարակ կարծիքի ստեղծած գործի վերայ, այլ ինչպէս գիտնական հմտութեան գործի վերայ, ինչպէս ամենանշանաւոր կենսական հարցերից մէկի վերայ:

Այս վերջին հատուածի մէջ մենք դառնում ենք նախապատուօրէն աշխատանք տուողներին ու իշխանութիւններին, որոնց նախաձեռնութիւնը հարկաւոր է կիրակի օրուայ հանգստութիւնը պաշտօնական կարգադրութեան բարձրութեանը հասցնելու համար: Հպատակները ու իրաւազուրկ աշխատաւորների բարի ցանկութիւնը չի կարող գործնական իրականացումն ունենալ, քանի որ նոքա կապուած են դաշնագրերի պայմաններով, և քանի որ տնօրէնը կարող է ստիպել կամ գայթակղեցնել նոցա տօն օրերը աշխատելու:

Մենք ամենից առաջ պէտք է բոլոր կառավարողներին յիշեցնենք՝ թէ առողջապահութիւնը նոցա պարտքն է համարում ոչ միայն համաճարակ հիւանդութիւնների առաջն առնելու միջոցները, այլ և հասարակութեան առողջ ու անընդհատ աճելու համար անելիք ամէն հոգացողութիւնները: Դժբաղդաբար՝ մինչև այժմ մենք՝ իրապէս՝ միայն մի բան ենք տեսել,

մենք տեսել ենք՝ թէ զանազան հաստատութիւններ, քաղաքային խորհրդարաններ, կառավարութիւններ այնքան կարճատեւ են, որ ներկայ րոպէի կոպէկանոց խնայողութիւնները գերադասում են ապագայի մեծ բարիքներից: Իմ հայրենի քաղաքի (Լէյպցիկ) իշխանաւորների խնայողութիւնը, որ ափսոսացին վատնել մի քանի հարիւր մարկ տաղաւարներ շինելու համար խոլերայի երեւալուց յետոյ՝ պատճառ եղաւ հազար ու հազար մարկի զուր ու անկարգ ծախսելուն: Իսկ այսպէս են և կիրակուայ հանգստութեան դէմ արած պատասխանները. հարկաւ՝ այսպէս են և կտրճատես մարդկանց անխոհուն քաղաքակաշտութեան հետեւանքները:

Այս մարդիկ հաստատում են՝ թէ կիրակի օրը ընդհանրութեամբ տօնելը դրամական գումարների մեծ կորուստներ կը պատճառէր: Եթէ այս պատասխանը հիմնաւոր լինէր, կիրակի օրը բանող երկրների բաղդատութիւնը այս օրը տօնող երկրների հետ՝ ցոյց պէտք է տար, թէ առաջինները աւելի մեծ երջանկութիւն են վայելում՝ քան վերջինները: Իրապէս երեւում է՝ թէ այն երկրները, որոնք աւելի հոգեկուած են կիրակուայ հանգստութեան խստիւ պահելով՝ այսինքն Անգլիան ու Ամերիկան՝ շատ գերազանցել են հարստութիւնով ու կեանքի յարմարութիւններով մեզ Իերմանացիներին, որ շաբաթուայ եօթը օրը մեզ տանջում ենք: Շատ իրաւացի նկատողութիւն է աւելում անգլիացի պատմաբան Մակուէյը՝ «Եթէ մեր երկիրը արդէն 300 տարի չլուծնէր կիրակին ինչպէս հանգստութեան օր, եթէ մինք և այս օրը շարունակէինք բանել բահով ու բրիչով՝ մրճով ու դուրով, մենք աւելի շատ աղքատ և աւելի քիչ քաղաքակրթուած ազգ կլինէինք»:

Ամէն շաբաթ՝ հանգստութեան մի օր խստիւ պահող ազգերից մէկն էլ հրէաներն են. ոչինչ չկորցնելով տնտեսութեան կողմից նոքա միայն շահուում են առողջապահական կողմից, նոյա առողջութեան վիճակը աւելի լաւ է և կեանքի տևողութիւնը երկար է քան քրիստոնեաներինը. այսպէս Մայերի (Ֆիւրտում) Նէփիլիլի (Մայնի վերայի ֆրանկֆուրտում) ու Կօլբի ասելովը քրիստոնեաների կեանքի միջին տևողութիւնը հաւասար է մօտաւորապէս 26 տարու, իսկ հրէաների 36:

Ժողովրդի տնտեսութեան ու առողջապահութեան շահերի

նոյնութիւնը՝ դժբաղդաբար՝ դեռ այնքան քիչ է յայտնի, որ աւելորդ չեմ համարում պարզել այս մի ուրիշ շրջանից առած օրինակով, որի մէջ՝ բաղդաւորապէս՝ ձգտողութիւն է զարթել դէպի գործնական կերպարանափոխութիւններ: Մեր օրինակը վերաբերում է առողջապահական պայմանների բարւոյնընդուն՝ պայմանների, որոնք մարդկային հասարակութեան կորուստ են սպառնում և անյապաղ պահանջում են փոփոխութիւններ համաձայն առողջութիւն պահպանելու գիտութեան սկզբունքներին: Գործունեայ առողջաբան Պէտտէնկոփէրը հաշոււմէ այն մնասը, որ հասնում է այս ճանապարհով յառաջ եկած հիւանդութիւններից, և այն օգուտը, որը կարելի է ստանալ նախապահական միջոցների գնովը:

Յիշելով այն իրողութիւնը թէ շնորհիւ անընդհատ ուհիմնաւոր բարւոյնմաների մեղմողների թիւը Լոնդոնի մէջ հարիւր տարուայ ընթացքում իջել է 35 ից 22 ի 1000 ից: Պէտտէնկոփէրը հաշիւ է քցում, այն տնտեսական շահերը, որոնք նոր ճանապարհով կարող էր ստանալ Միւնխէնը, ուր մեղմողների թիւը մինչ այժմ դեռ հաւասար է 33 ի 1000 ից: Այս հաշիւներից երևում է թէ՛ եթէ մի որ և է առողջապահական միջոց իջեցնում է մեղմողների թիւը 33 ից 30 ի, և ընդունելով, թէ մարդու ամէն հիւանդ օրը նստում է միայն մէկ գուլդէն, կտացուէր տարեկան խնայողութիւն 346 հազար գուլդէն: Իսկ եթէ Միւնխէնը դառնայ նոյնպէս առողջ ինչպէս Լոնդոնն է, այսինքն նորա մէջ սկսէր ամէն հազարից մեղմել միայն 22 քնակից, տարեկան օգուտը կհասներ 1271000 գուլդէնի, որը հաւասար կլինէր 25 միլիոն գուլդէն գումարի: Որովհետեւ Պէտտէնկոփէրը աչքի առաջին դէպքի միայն մի որ և է միջոց՝ ինչպէս ստորերկրեայ ջրանցներ շինելը, այլ առողջապահական ու քնկերվարական կարգերի մի ամբողջ զուգաւորութիւն, ուստի դժուար չէ հասկանալ, թէ մահի այսչափ սակաւ թիւը սկայական արուեստաշահ քաղաքում մասամբ պէտք է վերագրուի կիրակուայ հանգստութեան ի վաղուց խստիւ պահելուն:

Բաւական ճարտարախօս վկայութիւն՝ նոյն ուղղութիւնով հիւսիսային Սմերկիայի Լօրլլ արուեստաշահ քաղաքի պայմաններն են, որը՝ համաձայն Ֆօշէի հիանալի նկարագրութեան՝ բար-

գաւաճութեան, բարոյականութեան ու առողջութեան օրինակելի պատկեր է: Այս քաղաքում ընդունուած է ոչ միայն կիրակիի ամենախիստ կերպով տօնել, այլ և կարգադրուած է մի կանոն, որով բանւորները փոփոխաբար գործում են արհեստանոցում ու գաշտում: Հետեւեալն այն է, որ այս քաղաքում 57 մարդուց տարեկան մեկն է մեռնում, մինչդեռ Մանչեստրում 29 ից մէկն է մեռնում: Լիդսում 36 ից մէկը, Շէֆիլդում 32 ից մէկը:

Աերեւ բերած հաշուից արած ընդհանուր եզրակացութիւնը՝ ակնյայտի կերպով ցոյց է տալիս՝ թէ առողջութիւնը պահպանելու ձեռք զարկած միջոցները բաւարարութիւն են տալիս ոչ միայն յարմարութեան ու մարդկութեան պահանջներին, այլ օժանդակում են դրամական մայր գումարի բազմանալուն, որ բարձր տոկոսներ է բերում: Կարճ ասած, բանը այն տեղն են հասցնում որ անարդիւնաւէտ չնախատեսուած ծախսերի փոխարէն սկսւում է յառաջանալ արդիւնաբեր գումարի ժողովուրդը: Իսկ այսպիսի առողջութիւն պահպանելու միջոցներին պատկանում է և կիրակուայ հանգստութիւնը, որ ստեղծում է ահագին արդիւնաբեր գումար:

Կիրակուայ հանգստութիւնը այս բանին հասնում է աշխատելու ուժի պահպանելով, մարդկային առողջութեան ու կեանքի պահպանելով: Ինչպէս վերեւ տեսանք՝ մի հեղինակութիւն ունեցող բնախօս հաշուել է՝ թէ մութիւն, որ հաւասարապէս բաժանում է իւր ժամանակը աշխատանքի ու հանգստութեան մէջ, կարող է ապրել մինչև հարիւրամեայ հասակը: Անգլիան էլ Ամերիկան էլ շարունակ տալիս են մարդիկ որ ոչ միայն ապրում են մինչև այս սահմանը, այլ նաև անցնում են սորանից: Եւրոպական յամաքահայի վերայ, որտեղ բանւորների դասակարգը ամբողջ բնակիչների 80 տոկոսն է, կեանքի միջին տևականութիւնը տատանւում է 26 ու 40 տարու մէջ: Իսկ մենք գիտենք՝ թէ աշխատելու ուժը մի առանձին տեսակի առաձգականութիւն է, որը միայն 6 օր է պահպանւում: Իսկ եօթերորդ օրը պահանջում է հանգիստ նորա համար՝ որ նորից կարողանայ կատարել պատշաճօրէն իւր հեռեւեալ վեցօրեայ շրջանը: Փողովրդական տնտեսութեան լեզուով թարգմանելով այս նշանակում է՝ կիրակուայ հանգստութիւնը պահպանում է աշխատելու ուժը, ա-

առողջութիւնը և բանւորի կեանքի տեսականութիւնը, իսկ տեւական անընդհատ աշխատանքը (որը անգլիական լառողջաբանները ասում են *overwork* «չափազանց աշխատանք») նախաժամանակ միշտ է բանեւոր ուժը, քայքայում է առողջութիւնը, կարճացնում է բանւորի կեանքի տեսականութիւնը: Ակրնյայտի է, որ սա փոխակերպութիւն է յայտնի բնաբանի *health is wealth* այսինքն առողջութիւնը հարստութիւն է: Եւ եթէ հարրոտութիւնը ստացւում է իւր կամ ուրիշի հիւանդանալու գնով, այսպիսի գործավարութեանը վատ տնօրէնութեան անուն են տալիս:

Բայ եւ տալիս ինձ բերել մի քանի իրողութիւններ իմ սեպհական փորձառութիւնից: Մի քանի տառնեակ ասորուայ ընթացքում պատահեց ինձ լինել բժիշկ մի երկաթուղու ընկերութեան մէջ, բժիշկ մի քանի գործարանների հիւանդանոցներում: աղքատների համար բժիշկ մի քողաքային թաղում: ուր բնակում էին մեծ մասով օրական վարձկաններ: բժիշկ բոնեւորների դաշնակցութիւնով աղքատների համար կազմած գանձարաններում: վերջապէս բազմաթիւ փոստային դիւանական ու հաշուաբարական աստիճանաւորների տնային բժիշկ: Այս հանգամանքները միջոց տուին ինձ հաւաքել բուսական ընդարձակ ու լիակատար տեղեկութիւններ հիւանդութիւնների ու հիւանդաբար պատճառների մասին, որոնք ծանրացած են աշխատաւոր դասակարգի գլխին: Ես արդէն վաղուց կազմել եմ խորին համոզմունք՝ թէ՛ գոնեայ բոլոր մեծ ու փոքր աշխատութիւնների երկու երրորդ մասը, որոնց պատճառաւ այս ակտաւորները դառնում են բժիշկին, ոչ մի ուրիշ բանից չեն յառաջ գալիս, եթէ ոչ չափազանց աշխատելուց, աշխատութեան հիւանդութիւններ են: այս արդէն նորանից է երեւում, որ առանձին արհեստների մէջ նկատւում են հիւանդութիւնների զանազան՝ կարելի է ասել, մասնաւոր ձեւեր, որոնք իւրեանց համար կարող են մեկնութիւն գտնել միայն մասնաւոր պրոֆեսիոնական վնասների մէջ: Սակայն՝ այս հայեացքը բոլորովին նոր չէ՝ արդէն ոնցած դարի հաշակաւոր առողջաբան Տիսոսն լուսաբանեց զանազան արհեստների ու պարամունքների յատուկ եղած ակտաւորութիւնների վարդապետութիւնը: Բոլոր աշխատաւորները անսովոր յորմադրու-

Թիւն ունին հիւանդանալ և շատ անգամ արագ կորչում են վարակիչ ախտի երեւալուն պէս՝ մանաւանդ խոլերայի երեւալուն պէս։ Միւս ժամանակները ամենայնաճախ ախտաւորութեան ձեւէն արդէն մեր նկարագրած ընդհանուր քարոզած ծովախեցի, նորանից յետոյ տեւական հազը։ Ախտաւորների մեծամասնութիւնը բժշկից ուզում է ոչ այնքան դեղատոմս որքան վկայական գործից ժամանակաւորապէս ազատուելու համար։ Սակայն՝ այնտեղ ուր կայ դեղերի ձրի բաժանելը, ախտաւորները խնդրում են գրել իւրեանց համար և մի դարման, բժիշկն էլ ստիպուած է նշանակել մի օժանելիք, անտարբեր խմելու ճար, սպիտակիք ևւն։ Իսկէապէս՝ այս դիպուածներում միշտ մի բան է օգնում՝ աշխատելուց ազատուելը, բաց օդում շարժուելն ու մորթու հոլմահարուելը։ Բժիշկը միայն իւր մէջ շատ անգամ խոստովանում է՝ թէ լաւ կլինէր այս ինչ ախտաւոր բանւորին ուղարկել մի տեղ երեք ամսով գիւղում ազատութիւն վայելելու, բայց այսպիսի ցանկութիւնը մնում է հարկաւ՝ պղատոնական։ Մանաւանդ՝ որ բանւոր մարդիկ սովորաբար ունին այնքան սաստիկ զարգացած պատուի զգացողութիւն, որ հազիւ նոքա սկսում են մի փոքր լաւ զգալ իւրեանց, իսկոյն նորից վերադառնում են գործելու, որ ոչ ոք չկոսկածի նոցա ծովութեան ու աշխատանքից վախելու մէջ։ Հիւանդների ամենամեծ մասը դառնում է բժշկի խորհրդին միշտ երկու շաբթի օրերը։ Հարկաւ, մասամբ այս կախուած է կիրակուայ երեկոնների քէփից, բայց միայն մասամբ։

Գործնական կեանքում, հաշուարաններում, փոստում, երկաթուղու գրասենեակներում ծառայողների մէջ շատ անգամ այնպէս դիպուածներ են հանդէպ գալիս, երբ ախտաւորը անընդունակ է գործելու ոչ թէ մի քանի օրով, այլ մի քանի շաբաթով, ուստի բժշկից վկայական է ստանում երկար ժամանակ հեւանալու համար, որ այսանց թոյլ է տրուած։

Վերջապէս բոլորովին սովորական է և այն դիպուածը, երբ բանւորը կամ աստիճանաւորը դնաւում է աշխատելուց ոչ ժամանակաւորապէս, այլ ընդմիշտ, և սկսում է հոգ տանել ծառայութիւնից թողնելով դուրս գալու, հասնելով միայն 40 տարեկան հասակին, այսինքն այն հասակին, որից կանոնաւոր պայմաններում սկսում է մարդկային կեանքի իսկ ծաղկելը։

Զարմանալի չէ, թէ այս տեսակ փորձառութիւնը բերել է ինձ այն եզրակացութեան, որ բժշկի պաշտօնը ու գործունէութիւնը զանազան՝ հիւանդների համար կազմած գանձարաններում պարզապէս վերջանում է փոած նիւթի կարկատելովը ու յարդարելովը, այս եզրակացութեան բնական հետեւանքը եղել է ցանկութիւն այս խեղճ պարապմունքը թողնելու և արմատական առողջապահի միջոցների օգտին ծառայող յորդորակին դիմելու։ Դժուար չէ տեսնել թէ գործ տաղներն ըզբաղում են միայն ոչ մի բանի չհասցնող կարկատանով, արժէ նայել միայն հետեւեալ ապարդիւն, ուղղակի անօգուտ դէնքած ծախսերի ցուցակի վերայ՝ 1) բժշկելու փողը, կամ արձակուրդ ստացողների ռոճկի պահպանելը. 2) դեղարանի հաշիւը. 3) փոխանակողների վարձը. 4) բուժավայր (կուրօրգ) ուղարկելու ծախսը. 5) կանխաժամանակ թոշակ նշանակելը. 6) այրիների օգնութիւնը, որի համար ընդհանրապէս հարկաւոր է լինում շատ փող։

Եթէ այս հետեւութիւնները մշակենք այն մետոդով, որին հետեւել է Աէտէնկոփէրը իւր հաշուառեսութեան մէջ, կը յայտնուէր թէ այս ապարդիւն ծախսերի մեծ մասից կարելի էր խոյս տալ և դարձնել նորան արդիւնաւէտ գումար, որի համար պահանջում է միայն նախապէս արգելել առողջութեան ու կեանքի չափազանց գործելով խանգարուելը. սորա համար միայն հարկաւոր է բոլոր շնախատեմունքում ու անկանոն կարգադրած հիւանդութեան օրերը, միանգամ ընդ միշտ իւրաքանչիւր բանւորի համար որոշել հաւանար 52 օրուայ՝ տարուայ մէջ, որ չի պահանջում ոչ բժշկութեան, ոչ դեղերի ծախս, ոչ օժանդակութեան գանձարանից փոխատուութիւն. մի խօսքով՝ արժէ միայն կիրակուայ հանգստանալը պարտադիր անել։

Ամփոփենք նախորդ դատողութիւնների հիմնական միտքը, չափազանց աշխատութիւնը ստեղծում է համեմատաբար եկամտի չնչին յաւելում՝ մշտապէս սառնակ վտանգ լինելով բանւորի համար մնասել ու նախաժամանակ կորցնել իւր բանելու կարողութիւնը. ամէն եօթներորդ օր հանգստանալուց ընդհատող աշխատութիւնը ստեղծում է օգուտ ժամանակաւոր չնչին նուսգումը. բայց նա տպահովուցնում է գործելու կարողութեան երկարատեւ բարւոք պահելը. Ատուաւոր կա-

րող է համարուել միայն այս տեսակ աշխատութիւնից ստացած օգուտը: Աիրական օրուայ չպահպանելը բանւորի կողմից պէտք է համարուի իբր անպատիւ գործ իւր անձի ու իւր մերձաւորների վերաբերութեամբ: Իսկ աշխատանք տուողի կողմից կիրակուայ չպահպանելը ուղղակի իբր վաշխառութիւն է աշխատաւորի հաշուին:

Մեզ մնում է մի քանի խօսք ասել էլի մի կէտի վերայ: Բանւորը հասարակ մեքենայ չէ, մասերի կամ անդամների հասարակ ժողովածու չէ: Բաւարկաներ արտադրելու համար, այլ մտաւոր կեանքով օժտուած էակ:

Այս բարձր հայեցակէտի տեսականապէս խոստովանելովք ժամանակակից քաղաքակրթութիւնը կտրուկօրէն տարբերուում է հին աշխարհից, որը աշխատութիւնը նախատինք էր համարում և աշխատող մարդու մէջ տեսնում էր ոչ թէ մարդ, այլ ստրուկ: Աթենացիները՝ ասում է Ա. Բլանկի (Blanqui), ըզգուսմէին դէպի իւրեանց ստրուկները ոչ աւելի կարեկցութիւն, քան մեր ժամանակակից գործարանատէրերը դէպի իւրեանց մեքենաների անիւները: Այսպիսի ժամանակները արդէն անցել են, և ներկայումս աշխատութիւնը արդէն համարուում է ոչ թէ նախատինք, այլ պատուաւոր գործ: Մի և նոյն ժամանակ չէ կարելի չհամաձայնուել բոլոր ժամանակից ընկերվարական քաղաքագէտների հետ (Դէնի, Գարրիս, Փօնոմօրգէնշտէրն, Դիւ - Պիւիւօդ, Մինգէտտի, Կէրի ևւն), որոնք հաստատում են՝ թէ այս խոստովանութիւնը մնում է աւելի տեսական քան գործնական, և թէ «սպիտակ ստրկութիւնը» շարունակում է գոյութիւն ունենալ մինչև այժմ:

«Ձունւորները» ասում է Կէրի՝ ստորացնում են՝ գրաստի աստիճանին և վերջապէս ստրկութեան շղթայով կաշկանդում են: Այս տեղից յառաջանում է մարդկային հասարակութեան այն վտանգաւոր երկփեռեկութիւնը ազատ մարդկանց ու ըստրուկների մէջ, երբ բոլորովին մի և նոյն է՝ թէ ով է ստրուկ դառնում սեւամորթը թէ գործարանի սպիտակամորթ բանւորը, և այս երկփեռեկութիւնից վերջնականապէս ծագում է հասարակութեան մի մասի միւսից այնքան օտարանալը, որ նոցա մէջ փոխադարձ յարաբերութիւններում թագաւորում է անզգայութիւն, եթէ աւելին չասենք:

Այս բարբարոսութեան մասին խօսում է և Ադամ Սմիտի շարադրութիւնների հրատարակիչ՝ Գ. Թէզլէրը՝ «ոչինչ կասկած կամ վեճ չկայ այն իրողութեան համար, թէ ժամանակակից տնտեսական տնօրէնութիւնը հիմնուած է յափշտակութեան վերայ, և յափշտակութեան առարկան մարդն է: Բանւորների մէջ եղած՝ աչքի զարնւող՝ մօհերի պատճառներից պէտք է ցոյց տալ հոգեկան ճնշուած վիճակը, որ երեւան է գալիս աշխատւորների մէջ աշխատանքի բաժանուելու եղանակից: Վերջինս դարձնելով բանւորին մեքենայի մի մասը, քանդում է նորա ներսի միութիւնը, սորա հետ միասին և կանոնաւոր գոյութեան բոլոր պայմանները՝ այս նորա մէջ ստեղծում է ներսի դատարկութիւն ու մասամբ գիտակցական՝ մասամբ անգիտակցական, անբաւականութիւն իւրեանից ու աշխարհից: Այս վիճակը կարճացնում է կեանքը, ծնում է հիւանդութիւններ, նախաժամանակ ընդհանուր թուլութիւն, բթամտութիւն ու ձգողութիւն դէպի շշմացնող ու մոռացնող միջոցները: Այսպիսի պայմաններում բանւոր դասակարգը դառնում է հիւանդոտ ու վտանգաւոր անդամ՝ հասարակութեան համար: Օրինական մարդկային գոյութեան համար կարողութիւն չունենալով և հարստահարութեան ու վայրենաբարոյութեան մատնուած զոհ լինելով, բանւոր ամբողջ մշտապէս լի է ձգողութիւնով ազատուելու իւրեան լափող՝ անմխիթար ներսի դատարկութիւնից, ազատուելու ինչ գնով կուզէ լինի, մինչ՝ անգամ ուժի միջնորդութեամբ:»

Բոլոր մարդկանց, որոնք ճշմարիտ կամենում են հասարակութեան խաղաղ ու անընդհատ աճելը, խորհուրդ ենք տալիս խորհել իրերի այս դրութեան վերայ՝ որի մասին խօսում են այս գրողները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Իմ քննութեան ընդհանուր հետեանքը կարելի է ձևաւորել այս եղանակով: «Երբեք չկարող ենք իմացաւոր լինել յմերկեան համար: Երբեք չենք կարող իմանալ հանգստութիւնը, աւողջապահութեան առաջին պարտաւիրանն է, որ ի նկատի ունի հասարակութեան անխնայ ու անընդհատ աճելը, յետոյ ի նախնայ մտաւորական, նոյնպէս և կրօնական կարգադրութիւն է: Ամէն բանւորի առանկա

նապէս տալիս է նա երկարատե աշխատելու ընդունակութեան ապահովութիւն, հոգու աւելի բաւականութիւն, աւելի խորին ու ապահով ծերութիւն. ամէն տնօրէնի նա տալիս է հիմն լաւորակ տնօրէնութեան համար. կառավարութեան տալիս է միջոց խաղաղութիւն ու կարգ պահպանելու հասարակական կեանքի մէջ. ամէնքին չափ է տալիս չափելու՝ թէ որքան առողջ միտք կայ մի ժողովրդի մէջ, և որքան յառաջ է գնացել սա քաղաքակրթութեան ճանապարհի վերայ:

(Թարգմ.) ԲԺ. Մ. Զ.

ՄԱՐԴՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆՈՒՑ.

Ոչ մի գիտութիւն այնպիսի արգասաբեր հետեանք ու փառաւոր յաղթանակներ չէ ներկայացնում գիտնական աշխարհում, ինչպէս ներկայ դարիս բնախուզութիւնը. ուստի և չը պիտի զարմանալ, որ դա միակ օրինակելի գիտութիւն է համարուած: Սակայն այդ գիտութեան ներկայացուցիչների աչքին մի տարօրինակ բան էր երևում, երբոր հուշակաւոր բնախոյզներից մինը բնագիտութեան սահմանի վերայ խօսելով մատնացոյց արեց աշխարհի հանելուկների վերայ, որոնք բնախուզութեան համար ընդմիջտ անլուծանելի պիտի մնան: Ignoramus ignorabimus.

Այդ անլուծանելի աշխարհի հանելուկներին վերադրում է Դէ բուռ Բալմոնդ գիտակից կեանքը, սկսած ամենապարզ զօրութիւններից մինչև ամենաբարձր մոլքի և կամքի գործողութիւնները: Թէ ինչպէս նիւթերի ի միասին գործելուց, ատումների միաւորութիւնից կամ անջատումից մի որ և է հոգեկան վիճակ, մի զգայութիւն յառաջ է գալիս գորան մեր խոհականութիւնը չէ կարողանում հասնել: Բոլոր հոգեկան վիճակները, զգացողութիւնները, յիշողութիւններն, երեակայութիւնները, մտքերը զգացումները, ձգտումները . . . այնքան զանազանվում են բնալուծական—ֆիզիքական երեւոյթներից, որ նոցա բնաւ համեմատել չէ կարելի այդ գործարանական երեւոյթների հետ: Ուստի և մի անմիտ բան է, եթէ որ նիւթա-